Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 7 բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագիրը.

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Ավստրիական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության Ֆելդքիրխի գրասենյակի կողմից տրամադրված մարդասիրական օգնության բախշում» ծրագիրը.

«Ագապե» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Մարդկային տառապանքը որպես պատերազմի և բնական աղետի հետևանք» ծրագիրը.

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունի քաղաքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում 3-րդ փուլի հեղինակային հսկողություն» օժանդակ ծրագիրը.

«Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Կոմիտաս Վարդապետի թանգարան-ինստիտուտ» մշակութային կենտրոնի կառուցում» ծրագիրը.

«Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Երևանի թիվ 155 մանկապարտեզի դռների և պատուհանների տեղադրում» ծրագիրը.

«Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագիրը.

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: